Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր

իրավասության քաղաքացիական դատարան

Հայցվոր՝	«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպություն Պետական գրանցման համարը՝ 211 171 01863 Գտնվելու վայրի հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ e-mail: foi@foi.am
«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպություն նախագահ՝	Շուշան Մուկուչի Դոյդոյան Անձնագիր՝ [redacted], տրված՝ [redacted]-ի կողմից
Ծանուցման հասցե՝	ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Պատասխանող՝	«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն
Պատասխանողի գտնվելու վայրի հասցե՝	Հասցե՝ [redacted]

Հայցադիմում

Տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին

1. Փաստերը, որոնց վրա հիմնվում է հայցապահանջը (գործի մինչդատական նախապատմությունը).

1.1. Հայցվոր «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը (այսուհետ ԻԱԿ կամ Հայցվոր) հիմնադրվել է 2001 թ. լրագրողների և իրավաբանների կողմից: ԻԱԿ-ի առաքելությունն է նպաստել տեղեկատվության ազատության մասին օրենսդրության կիրառմանը, ՀՀ կառավարման համակարգի թափանցիկությանն ու հրապարակայնությանը և այդ համակարգում քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովմանը:

1.2. ԻԱԿ-ը ստացել է «Ինֆորմացիոն կոմիտե» տեղեկատվական հասարակական կազմակերպության «infocom.am» լրատվական կայքի (այսուհետ նաև՝ Ինֆոքոմ) դիմումը, ով նշել է հետևյալը.

1.2.1. Ինֆոքոմի լրագրողը հիմնվելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ ՏԱ մասին օրենք) վրա, 2023 թվականի օգոստոսի 9-ին տեղեկություն ստանալու հարցմամբ դիմել էր Քաղաքացիական պայմանագիր կուսակցությանը (այսուհետ նաև՝ Կուսակցություն կամ Պատասխանող)՝

խնդրելով տեղեկություններ Երևանի ավագանու ընտրություններին ընդառաջ տեղի ունեցած՝ Կուսակցության դրամահավաք-երեկոյի ընթացքում գումար հանգանակած նվիրատուների ցանկը, ինչպես նաև նույն դրամահավաք-երեկոյի ընթացքում Կուսակցությանը հանգանակած և «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված սահմանաչափը գերազանցող նվիրատվությունների գումարի վերադարձման մասին տեղեկություններ:

1.2.2. 2023 թվականի օգոստոսի 15-ին Ինֆոքոմի լրագրողը ստացել է միջանկյալ պատասխան հարցմանը պատասխանելու ժամկետի երկարաձգման մասին. մասնավորապես, միջանկյալ պատասխանում Կուսակցությունը նշել է, որ իրենց աշխատակազմը ծանրաբեռնված է Երևանի ավագանու սպասվող ընտրությունների կազմակերպչական խնդիրներով և որ լրագրողի հարցմանը կփորձեն պատասխանել հնարավորինս սեղմ ժամկետում:

1.2.3. 2023 թվականի օգոստոսի 18-ին Ինֆոքոմի լրագրողը լրացուցիչ գրությամբ վկայակոչելով ՏԱ մասին օրենքի դրույթները՝ նշել է, որ Երևանի ավագանու սպասվող ընտրությունների կազմակերպչական խնդիրներով ծանրաբեռնված լինելը օբյեկտիվ հիմք չէ հարցման պատասխանը անորոշ ժամկետով հետաձգելու համար և խնդրել է հարցման պատասխանի հետաձգման պատճառների և տեղեկության տրամադրման վերջնաժամկետի մասին տեղեկացնել՝ ըստ օրենքի պահանջի:

1.2.4. Ինֆոքոմը Կուսակցությունից որևէ այլ պաշտոնական պատասխան, այդ թվում՝ պահանջվող տեղեկությունները չի ստացել:

1.3. ԻԱԿ-ը 2023 թվականի օգոստոսի 23-ին տեղեկություն ստանալու թիվ 351-48 հարցմամբ (այսուհետ նաև՝ Առաջին հարցում) դիմել է Կուսակցությանը՝ խնդրելով տրամադրել հետևյալ տեղեկությունները.

«1. Երևանի ավագանու ընտրություններին ընդառաջ տեղի ունեցած «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության դրամահավաք-երեկոյի ընթացքում գումար հանգանակած թվով 987 նվիրատուների ցանկը:

2. Համաձայն «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Կուսակցությանը տրվող նվիրատվության, ինչպես նաև անդամավճարի և մուտքի վճարի ընդհանուր չափը՝ դրամական արտահայտությամբ, մեկ տարվա ընթացքում չի կարող գերազանցել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրհազարապատիկը, այդ թվում՝ մեկ ֆիզիկական անձի կողմից՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարհինգհարյուրապատիկը»: Միայն «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության դրամահավաք-երեկոյի ընթացքում հանգանակված գումարն արդեն գերազանցում է նվազագույն աշխատավարձի հինգհարյուրհազարապատիկը: Խնդրում եմ տրամադրել տեղեկություն այն մասին՝ ե՞րբ և որքա՞ն գումար է հետ վերադարձվել:

3. Ավելացած նվիրատվությունները վերադարձվել են նվիրատուների՞ն, թե՞ պետբյուջե:

4. Եթե ավելացած նվիրատվությունները դեռ չեն վերադարձվել, ե՞րբ է նախատեսված վերադարձնել։»։

1.4. Կուսակցությունը չի պատասխանել ԻԱԿ-ի կողմից ներկայացված Առաջին հարցմանը, որի արդյունքում խախտվել է վերջինիս տեղեկատվություն ստանալու ազատությունը։

1.5. 2023 թվականի սեպտեմբերի 11-ին ԻԱԿ-ը Կուսակցությանն է դիմել տեղեկություն ստանալու թիվ 351-68 կրկնակի հարցմամբ (այսուհետ նաև՝ Կրկնակի հարցում)՝ ևս մեկ անգամ խնդրելով պատասխանել իր Առաջին հարցմանը «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ ՏԱ օրենք) 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում։

1.6. Կուսակցությունը չի պատասխանել ԻԱԿ-ի կողմից ներկայացված Կրկնակի հարցմանը, որի արդյունքում խախտվել է վերջինիս տեղեկատվություն ստանալու ազատությունը։

1.7. Կուսակցությունը «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածի ուժով ֆինանսավորվում է պետական բյուջեի հաշվին։

1.8. Կուսակցությունը «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 4-րդ հոդվածի ուժով պարտավոր է ապահովել իր գործունեության թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության սկզբունքները։

2. Վիճելի իրավահարաբերության նկատմամբ կիրառման ենթակա իրավական նորմերը.

2.1. ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք։ Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը»։

2.2. Տեղեկությոուն ստանալու՝ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքն առարկայացել է ՏԱ մասին օրենքում, որի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Սույն օրենքի գործողությունը տարածվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունների և դրանց պաշտոնատար անձանց վրա»։

2.3. Նույն օրենքի 6 հոդվածի 1-ին մասի համաձայն. «Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը»։

2.4. Նույն օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն «7. Գրավոր հարցման պատասխանը տրվում է հետևյալ ժամկետներում. 1) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված չէ, ապա դրա պատճենը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում. 2) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված է, ապա տվյալ հրապարակման միջոցի, վայրի և ժամկետի մասին տեղեկությունը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում. 3) եթե գրավոր

հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները և տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը։»:

2.5. Նույն հոդվածի 10-րդ և 11-րդ մասերի համաձայն՝ «10. Եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությունը, կամ դրա տրամադրումն իր լիազորությունների շրջանակից դուրս է, ապա նա տվյալ գրավոր հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել դիմողին, իսկ հնարավորության դեպքում նրան տրամադրել նաև այդ տեղեկատվությունը տնօրինողի (այդ թվում՝ արխիվի) գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկությունը։»:

2.6. «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ 1. Կուսակցությունների պետական ֆինանսավորումը (պետական սուբսիդավորումը) իրականացվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին՝ նպատակ ունենալով խթանելու որոշակի հանրային աջակցություն ունեցող և եկամտի այլ էական աղբյուրներ չունեցող կուսակցությունների կենսունակությունն ու ինքնուրույնությունը: Այդ ծախսերն արտացոլվում են պետական բյուջեում առանձին հոդվածով:

2.7. Վերոգրյալ իրավական նորմից բխում է, որ կուսակցությունները, այդ թվում Պատասխանողը ֆինանսավորվում են պետական բյուջեից, որի արդյունքում համարում ենք հիմնավորված մեր այն պնդումը, որ ՏԱ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետի ուժով Պատասխանող կուսակցության նկատմամբ կիրառելի է ՏԱ օրենքի կարգավորումները։

2.8. Ընդ որում, Պատասխանողը «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 4-րդ հոդվածի կարգավորման լույսի ներքը պարտավորություն է ստանձնել իր գործունեության վերաբերյալ լինել թափանցիկ, հրապարակային և հաշվետու։ Մասնավորապես՝ «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «2. Կուսակցության գործունեությունը հիմնվում է (...) գործունեության թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության սկզբունքների վրա։»:

2.9. Արդյունքում եզրակացնում ենք, որ Կուսակցությունը կաշկանդված լինելով ՏԱ օրենքի և «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքի կարգավորումներով, անտեսել է դրանք, որի հետևանքով խախտվել է հայցվորի տեղեկատվություն ստանալու սահմանադրական իրավունքը։

2.10. ԻԱԿ-ի կողմից Սահմանադրական դատարան ներկայացված դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանը 2016 թ. փետրվարի 23-ին կայացված թիվ ՍԴՈ-1256 որոշմամբ անդրադարձել է տեղեկատվության ազատության սահմանադրական բովանդակությանը։ Սահմանադրական դատարանը հիշյալ որոշմամբ նշել է.

«Հարկ է նշել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում անդրադարձել է տեղեկատվության ազատության խնդիրներին, մասնավորապես. 2009 թ. ապրիլի 14-ի Társaság a Szabadságjogokért v. Hungary (գանգատ թիվ 37374/05) գործով դատարանը եզրահանգել է, որ հասարակության համար

հետաքրքրություն ներկայացնող տեղեկության տրամադրման խոչընդոտները կարող են բացասաբար ազդել ԶԼՄ-ներում և հարակից ոլորտներում գործունեություն ծավալող անձանց վրա: Իսկ 2013թ. նոյեմբերի 28-ի Österreichische Vereinigung zur Erhaltung, Stärkung und Schaffung eines wirtschaftlich gesunden land und forstwirtschaftichen Grundbesitzes v. Austria (գանգատ թիվ 39534/07) վճռով դատարանը վերահաստատել է նախկին դիրքորոշումները, այն է՝ կողմնակից է «տեղեկություններ ստանալու ազատության» հասկացության ավելի լայն մեկնաբանմանը, որը ներառում է տեղեկությունների մատչելիության սկզբունքը»:

«Ամփոփելով վերոհիշյալ պահանջները և համադրելով վեճի առարկա օրենքի իրավակարգավորումների հետ՝ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից ու պաշտոնատար անձանցից տեղեկություններ ստանալու իրավունքը պետության համար ստեղծում է պոզիտիվ պարտականություններ ապահովելու համապատասխան իրավունքի պատշաճ և արդյունավետ իրականացումը»:

2.11. Սահմանադրական դատարանի որոշման մեջ նշված իրավական մեկնաբանությունների լույսի ներքո պնդում ենք, որ Հայցվորի տեղեկատվություն ստանալու իրավունքը չի կարող սահմանափակվել այնպիսի եղանակով, որը համահունչ չէ օրենսդրական կարգավորումներին և Հայաստանի կողմից ստանձնած միջազգային պարտավորություններին:

2.12. Տեղեկատվություն ստանալու իրավունքը երաշխավորված է նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ ՄԻԵԿ) 10-րդ հոդվածով, որի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից: Այս հոդվածը չի խոչընդոտում պետություններին՝ սահմանելու ռադիոհաղորդումների, հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիական ձեռնարկությունների լիցենզավորում»:

2.13. Պետությունը ստանձնել է պարտավորություն ապահովել անձանց կողմից տեղեկատվություն հավաքելու և տարածելու իրավունքը, որի շրջանակներում զանգվածային լրատվության միջոցները, այդ թվում Ինֆոքոմը, իրականացնում են իրենց գործունեությունը և առանց որի դժվար է պատկերացնել ժողովրդավարական հասարակարգը: Պետությունը ոչ միայն պարտավոր է ապահովել այդ իրավունքի իրացման ընթացակարգային, այլև նյութաիրավական մասը, մասնավորապես՝ օրենքների այնպիսի կարգավորում, որի շրջանակներում հիշատակված իրավունքը չի սահմանափակվի ավելի մեծ ծավալով քան դա կարող է տեղի ունենալ Սահմանադրությամբ և ՄԻԵԿ-ով սահմանված շրջանակներում:

2.14. Անդրադառնալով հարցման բովանդակությանը, ապա նշենք, որ դրանք ամբողջությամբ տեղավորվում են Կուսակցության կողմից հրապարակման պարտադիր ենթակա տեղեկատվությանը և առկա չէ ՏԱ օրենքով սահմանված սահմանափակումները:

2.15. Մասնավորապես ՏԱ և «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ «1. Կուսակցությունը պարտավոր է՝ (…) 2) յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների

պաշտոնական ինտերնետային կայքում՝ http://www.azdarar.am, հրապարակել ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի վերաբերյալ հաշվետվությունը։»:

2.16. Հայցադիմումի վկայակոչված իրավական նորմերից հետևում է, որ մի կողմից ԻԱԿ-ի պահանջած տեղեկությունները գաղտնիք չեն, մյուս կողմից, Կուսակցությունը ԻԱԿ-ի պահանջած տեղեկությունները չի տրամադրել՝ վկայակոչված նորմերի պահանջները և ըստ այդմ ԻԱԿ-ի՝ Սահմանադրությամբ և ՏԱ մասին օրենքով երաշխավորված՝ տեղեկություն ստանալու իրավունքը:

2.17. Հարկ ենք համարում նշել, որ Հայցվորի պահանջած տեղեկատվությունը ամբողջությամբ վերաբերվում է Պատասխանողի գործունեությանը, այսպիսով Պատասխանողը հանդիսանում է ՏԱ օրենքի իմաստով տեղեկատվություն տնօրինող: Մասնավորապես Կուսակցության կողմից կազմակերպված դրամահավաք-երեկոյի ընթացքում տեղի ունեցած հանգանակությունները (նվիրատվությունները և այլ դրամական միջոցները) մուտք են գործել Կուսակցության հաշիվներ և/կամ դրամարկղ, որը հնարավորություն է տալիս ճշրտությամբ տիրապետել հայցվող տեղեկատվությանն ամբողջությամբ:

2.18. Վերոգրյալը ամփոփելով, գտնում ենք, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը «Տեղեկատվության ազատության» մասին օրենքով և «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքով պարտավոր լինելով տրամադրել «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից պահանջված տեղեկատվությունը, խախտել է վեճը կարգավորող իրավական ակտերը, ցուցաբերել է անգործություն և ընդհանրապես անտեսել ներկայացված Առաջին և Կրկնակի հարցումները թույլ տալով Հայցվորի Սահմանադրությամբ, ՄԻԵԿ-ով և ՏԱ օրենքով երաշխավորված իրավունքների խախտում:

3. Այլ փաստարկներ, հայցադիմումը վարույթ ընդունելու հիմնավորումներ.

3.1. Սույն հայցադիմումով ներկայացվող իրավական վեճին և պահանջին ամբողջությամբ համադրելի, այն է՝ կուսակցություններին ՏԱ մասին օրենքով սահմանված կարգով ներկայացված տեղեկություն ստանալու հարցմամբ պահանջված տեղեկությունները տրամադրելու պահանջի մասին թիվ ԵԿԴ/1524/02/12 և ԵԱՔԴ/1239/02/12 քաղաքացիական գործերն ընդհանուր իրավասության դատարանն ընդունել է վարույթ: Ավելին թիվ ԵԿԴ/1524/02/12 գործերով դատարանը բավարարել է հայցվորի պահանջը, ճանաչել է հայցվորի՝ տեղեկություն ստանալու իրավունքի խախտման փաստը և պարտավորեցրել է կուսակցությանը տրամադրել պահանջված տեղեկությունները (ԵԱՔԴ/1239/02/12 գործը կարճվել է, քանի որ հայցվորը հրաժարվել է հայցից):

3.2. ՀՀ Դատական օրենսգրքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված իրավունքով մատնանշում եմ ՀՀ քաղաքացիական դատարանի վերոնշյալ դատական ակտում դատարանի կողմից օրենքներին տրված մեկնաբանությունները, այդ թվում՝ հայցադիմումը վարույթ ընդունելու վերաբերյալ:

4. Հայցապահանջը.

Ելնելով վերագրյալից՝

Խնդրում եմ

Պարտավորեցնել Պատասխանող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը տրամադրել Հայցվոր «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությանը 2023 թ. օգոստոսի 23-ի թիվ 351-48 առաջին հարցմամբ և 2023 թ. սեպտեմբերի 11-ի թիվ 351-68 կրկնակի հարցմամբ պահանջված տեղեկությունները:

5. Ապացույցների ցանկը

5.1. Ինֆոքոմի լրագրողի՝ 2023 թվականի օգոստոսի 9-ի հարցման պատճենը,

5.2. Կուսակցության՝ 2023 թվականի օգոստոսի 15-ի միջանկյալ պատասխանի պատճենը,

5.3. Ինֆոքոմի լրագրողի՝ 2023 թվականի օգոստոսի 18-ի կրկնակի հարցման պատճենը,

5.4. ԻԱԿ-ի՝ 2023 թվականի օգոստոսի 23-ի Առաջին հարցման պատճենը,

5.5. ԻԱԿ-ի՝ 2023 թվականի սեպտեմբերի 11-ի Կրկնակի հարցման պատճենը,

5.6. Հայցի 5.4-րդ և 5.5-րդ կետերում նշված հարցումները Պատասխանողին ներկայացնելու վերաբերյալ ապացույցները:

6. Հայցին կցվող փաստաթղթերը

6.1. Սույն հայցի 5.1-5.6 կետերում թվարկված ապացույցները,

6.2. ԻԱԿ-ի նախագահ Շուշան Դոյդոյանի անձը հաստատող փաստաթղթի պատճենը,

6.3. ԻԱԿ-ի պետական գրանցման վկայականի պատճենը,

6.4. Հայցադիմումի օրինակը և դրան կից փաստաթղթերի պատճենները պատասխանողին ուղարկելու ապացույց՝ փոստային անդորրագիր,

6.5. «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված չափով պետական տուրքի վճարված լինելը հավաստող ապացույցը՝ պետական տուրքի վճարման անդորրագիր:

Հայցվոր՝

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն»

հասարակական կազմակերպություն,

նախագահ՝ Շուշան Դոյդոյան

30.11.2023 թ., ք. Երևան